

# Հայկական հարցի միջազգայնացումը 1877-1878 թթ. ուսու-թուրքական պատերազմից հետո

## Summary

The Armenian question is the name of the national liberation movement fought by the Armenian people for liberating the Western Armenia from the Ottoman Empire. The issue appeared in the focus of international diplomacy after the Russian-Turkish war in 1877-1878. The Armenian question was discussed in San Stefano Treaty signed on 19 February 1878 where the 16th article referred to the Armenia and Armenians. The reforms provided with the Berlin's 61st article that were the provision of the security of the Armenian population, the report on the progress of reforms to the European powers by the Sublime Porte, were eventually not realized, then subjecting Armenians to new trials.

Հայկական հարցի միջազգայնացման ավելի քան 135-ամյա պատմության ուսումնասիրությունն արդիական նշանակություն ունի պատմագիտության համար՝ այն նորովի և անկողմնակալ գնահատելու տեսակետից: Հայկական հարցի միջազգայնացման պատճառները, ընթացքը, հայ ժողովրդի շարունակական անհաջողություններըն ու արտաքին քաղաքական կողմնորոշման հիմնահարցերը բազմիցս քննարկվել են ու տեղիք սովել տարակարծությունների: Ներկայումս էլ ՀՀ արտաքին քաղաքականության մեջ Հայկական հարցը (թեև բովանդակային որոշ փոփոխությունների ենթարկված) շարունակում է առանցքային տեղ զբաղեցնել, ուստի այս համատեքստում Հայկական հարցի, նրա միջազգայնացման գիտական նոր լուսաբանումը յուրահատուկ փորձ է՝ ընդառաջ գնալ ժամանակի առաջադրած հարցադրումներին:

Հայկական հարցի պատմությունը պայմանականորեն բաժանվում է երկու փուլի: Առաջինը ընդգրկում է XV դարի երկրորդ կեսից մինչև 1877-1878 թթ. ուսու-թուրքական պատերազմը, երբ հայ ազատագրական շարժման գործիչները դիվանագիտական բանակցությունների միջոցով փորձում էին եվրոպական որևէ պետության կամ պետությունների խմբի զինված միջամտությամբ ազատագրել Հայաստանը և վերականգնել նրա պետականությունը: Այս փուլում Հայկական հարցը

չի մտել միջազգային դիվանագիտության ոլորտ, չի դարձել ընդհանուր քննարկման առարկա և, բնականաբար, դրա մասին չի ընդունվել որևէ որոշում: Անշուշտ, տերությունները տեղյակ էին հայերի դրությանն ու պայքարին, որոշ դեպքերում էլ առանձին երկրներ փորձել են միջամտել իրադարձություններին, ինչպես, օրինակ, Ֆրանսիան 1862 թ. Ջեյթունի ապստամբության ժամանակ: Այս փուլում փաստորեն Հայկական հարցը այդպես էլ մնաց որպես հայերին հետաքրքրող ու վերաբերող ներքին հարց:

Հայկական հարցի երկրորդ փուլն ընդգրկում է 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից մինչև Առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը. այս փուլը նշանավորվեց Հայկական հարցի միջազգայնացմամբ, երբ այն դարձավ դիվանագիտական քննարկման առարկա<sup>1</sup>: 1878 թ. հետո Հայկական հարցը բազմիցս է արձարծվել ամենատարբեր միջազգային վեհաժողովներում և պայմանագրերում, ինչպես օրինակ՝ 1895 թ., 1912-1914 թթ., 1916 թ., 1917-1919 թթ., 1920-1923 թթ., 1945 թ. և այլն:

Հայկական հարցի դասական ըմբռնման (միջազգայնացման պարտադիր պայմանով) նախնական շրջանակը՝ դա արևմտահայությունն էր, այսինքն՝ Օսմանյան կայսրության հայկական նահանգները և ոչ երբեք արևելահայությունը: Եվ միայն հետագայում է, որ, XX դարի սկզբներին, այդ շրջանակի մեջ է ընդգրկվում նաև արևելահայությունը:

XIX դարի 70-ական թվականներին Հայկական հարցի բովանդակության մեջ տեղի ունեցավ շրջադարձ: Նախ՝ այն առաջին անգամ դարձավ միջազգային դիվանագիտության հարց, և երկրորդ՝ այս շրջափուլում նախապես խոսքը գնում էր ոչ թե հայերի անկախության վերականգնման, այլ արևմտահայերի շրջանում բարենորոգումներ անցկացնելու և նրանց համար անվտանգության երաշխիքներ ապահովելու մասին:

Հայկական հարցի երկրորդ՝ միջազգայնացման փուլի սկզբնավորման գործում առաջնային նշանակություն ունեցան XIX դարի 70-ական թվականներին Բալկանյան թերակղզում ծավալված իրադարձությունները: 1875 թ. ընդդեմ թուրքական կեղերումների ապստամբեցին Բոսնիան և Հերցոգովինան, 1876 թ.՝

---

<sup>1</sup> Տե՛ս Հայոց պատմություն, իմբ.՝ Հր. Միմոնյան, Եր., 2012, էջ 347:

Բուլղարիան, իսկ Սերբիան և Չեռնոգորիան պատերազմ հայտարարեցին Թուրքիային<sup>2</sup>: Բալկանյան իրադարձություններն ոգևորեցին նաև հայ ազատագրական շարժման գործիչներին: Այդ շրջանում է, որ ապստամբություններ բռնկվեցին Ջեյթունում և Վանում: Թուրքական կառավարությունը, որը ստանում էր Անգլիայի աջակցությունը, դաժանորեն հաշվեհարդար տեսավ ինչպես Բալկանյան ապստամբած ժողովուրդների, այնպես էլ հայ ժողովրդի հետ: Նշված իրադարձությունները և հատկապես Թուրքիայի կազմակերպած բուլղարական ջարդերն ունեցան միջազգային լայն արձագանք: Դարձյալ շրջանառության մեջ դրվեց Արևելյան հարցը, այսինքն՝ ազատագրական պայքարի միջոցով օսմանահպատակ քրիստոնյա ժողովուրդների անկախության վերականգնման հարցը: Եթե Ռուսաստանը, խրախուսելով բալկանյան ժողովուրդների հակաթուրքական պայքարը, փորձում էր անդամահատել Թուրքիան և տիրապետել նեղուցներին, ապա Անգլիան Թուրքիայի տարածքային ամբողջականությունը պահպանելու պատրվակով ձգտում էր ընդդեմ Ռուսաստանի ուժեղացնել իր դիրքերը Մերձավոր Արևելքում: Հակառուսական շեշտված դիրքորոշում էին որդեգրել նաև Ավստրո-Հունգարիան և Գերմանիան: Ռուսաստանը փորձում էր հարցը լուծել նախ դիվանագիտական ճանապարհով : Ռուսական կողմը նախատեսում էր Կ. Պոլսում հրավիրել միջազգային կոնֆերանս՝ Օսմանյան կայսրության տիրապետության ներքո գտնվող սլավոնական ժողովուրդների հարցը դիվանագիտական ուղիներով լուծելու նպատակով: Նրա հետևողական գործունեության շնորհիվ էր, որ 1876 թ. դեկտեմբերի 16-ին Կ. Պոլսում իր աշխատանքները սկսեց միջազգային մի կոնֆերանս: Դեսպանաժողովի նախօրյակին Կ. Պոլսի Հայոց պատրիարք Ներսես Վարժապետյանը հատուկ ուղերձով դիմում է Անգլիայի դեսպան Էլիոտին՝ խնդրելով, որ կոնֆերանսում քննարկման առարկա դառնա նաև Արևմտյան Հայաստանի ազգաբնակչության դրության բարելավման հարցը<sup>3</sup>: 1876 թ. Կ. Պոլսի դեսպանաժողովում Հայկական հարցն այդպես էլ չքննարկվեց, իսկ կոնֆերանսն էլ՝ չհանգեցրեց որևէ դրական արդյունքի, փակվեց 1877 թ. հունվարին: Հետագա դեպքերը զարգացան գլխապտույտ

<sup>2</sup> Տե՛ս նաև Հայ ժողովրդի պատմություն, ՀԽՍՀ ԳԱԱ, հ. 6, Եր., 1981, էջ 97:

<sup>3</sup> Մարտիան. Հայկական խնդիրն և Ազգային սահմանադրությունը Թուրքիայում (1860-1910), հ. Ա, Թիֆլիս, 1912, էջ 129:

արագությամբ: Անգլիայի ճնշման ներքո սուլթան Աբդուլ Համիդ 2-րդը մերժեց բալկանյան սլավոնների շրջանում բարենորոգումներ անցկացնելու առաջարկը, որի արդյունքում 1877 թ. ապրիլի 12-ին Ռուսաստանը պատերազմ հայտարարեց Թուրքիային:

Պատերազմը կարճ տևեց, ընդամենը 10 ամիս: Թուրքիան պարտություն կրեց: 1878 թ. հունվարի 31-ին Ադրիանուպոլսում ստորագրվել էր զինադադարի պայմանագիրը, որը պարունակում էր հաշտության հիմնական պայմանները: 1878 թ. փետրվարին Կ. Պոլսի արվարձան Սան-Ստեֆանո ավանում սկսվեցին հաշտության բանակցությունները: Պայմանագիրը ստորագրվեց հայ մեծահարուստ Առաքել Տատյան բեյի ամառանոցում փետրվարի 19-ին: Ռուսական կողմից այն ստորագրեցին Ն. Իգնատևը և Ա. Նելիդովը, իսկ թուրքական կողմից՝ Սավֆեթ փաշան և Սաադուլլահ բեյը<sup>4</sup>:

Դեռևս պատերազմի ընթացքում հայ հասարակական շրջանները փորձում էին Հայկական դատը ներկայացնել Ռուսաստանի «բարեհայեցողությանը»:<sup>5</sup> Բանակցություններ են վարվում մեծ իշխան Նիկոլայ Նիկոլանիչի հետ, իսկ փետրվարի 1-ին պատրիարք Վարժապետյանը Ալեքսանդր II –ին է ներկայացնում մի աղերսագիր, որտեղ հայցում է Ռուսաստանի միջամտությունը՝ Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ կատարելու վերաբերյալ: Ալեքսանդր II-ը տվեց պաշտոնական համաձայնություն, որով հանձնարարվում էր ռուսական պատվիրակության ղեկավար կոմս Ն. Իգնատևին՝ «թուրքերի հետ կնքվելիք դաշնակցության պայմանագրում ընդգրկել հայերի համար այս անչափ կարևոր հարցը»:<sup>6</sup> Սկզբում հայկական կողմը ակնկալում էր ինքնավարության խոստում կորզել տերություններից, բայց ինչպես Ռուսաստանը, այնպես էլ Անգլիան այդպիսի խոստումներ չտվեցին և ինքնավարության հարցը մեջտեղից դուրս եկավ: Մնում էր միայն բարենորոգումների խոստումը: Ռուսական պատվիրակ Իգնատևը հայերի դժգոհությանն ի պատասխան պարզաբանում էր, որ պատմական այս փուլում միայն դա էր հնարավոր ու խորհուրդ էր տալիս լինել իրատես և բավարարվել ձեռք բերվածով:

Սան-Ստեֆանոյի դաշնագիրը բաղկացած էր 29 հոդվածից:

---

<sup>4</sup> Տե՛ս Գաբրիլյան Խ., Հայկական հարցը, Պեյրութ, 1962, էջ 170:

Հայկական հարցն առաջին անգամ իր արտահայտումը գտավ պայմանագրի 16-րդ հոդվածում, ուր ասվում էր. «Նկատի առնելով այն, որ ռուսական զորքերի դուրս բերումը նրանց կողմից գրավված Հայաստանի՝ Թուրքիային վերադարձվելիք վայրերից կարող է այնտեղ առիթ տալ բախումների և բարդությունների, որոնք երկու պետությունների բարի հարաբերությունների վրա կունենան վնասակար ազդեցություն, Բարձր Դուռը պարտավորվում է անհապաղ կենսագործել հայաբնակ մարզերի տեղական կարիքներից հարուցվող բարելավումներ և բարենորոգություններ, և զերծ պահել հայերի անվտանգությունը քրդերից և չերթեզներից»<sup>5</sup>:

Հայկական հարցին վերաբերում էին նաև դաշնագրի 25-րդ և 27-րդ հոդվածները: 25-րդ հոդվածը նախատեսում էր ռուսական զորքերը Արևմտյան Հայաստանից դուրս բերել վեց ամսվա ընթացքում: Տրված ժամանակը բավարար էր, որ Բ. Դուռն այստեղ կատարեր «տեղական կարիքներից հարուցվող բարելավումներ և բարենորոգություններ»<sup>6</sup>: Փաստորեն, Ռուսաստանը ճանաչվում էր Հայկական հարցի լուծման երաշխավոր: 21-րդ և 27-րդ հոդվածները թուրքական կողմից պահանջում էր պատժիչ միջոցներ չձեռնարկել այն անձանց նկատմամբ, որոնք պատերազմի ժամանակ աջակցել էին ռուսական բանակին և չխոչընդոտել այն հայերին, որոնք ցանկություն կարտահայտեն հեռանալ Թուրքիայից<sup>6</sup>: Առանձին հոդվածով Ռուսաստանին իրավունք էր վերապահվում իրեն միացնել Արևմտյան Հայաստանի մի զգալի հատվածը՝ Արդահանը, Կարսը և Բայազետը, որը հայերի համար տնտեսական, մշակութային զարգացման և ազգային համախմբման հնարավորություն էր ընձեռում:

Այսպիսով, Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածով Թուրքիան պաշտոնապես ճանաչեց Օսմանյան կայսրության սահմաններում Հայաստան երկրի գոյությունը: Փաստորեն, առաջին անգամ Հայկական հարցը վերածվեց քաղաքական գործոնի, տեղ գտավ միջազգային պայմանագրում և դարձավ Արևելյան հարցի բաղկացուցիչ մաս:

<sup>5</sup> Ю. Ключников, А. Сабанин, Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях, ч. 1, М., 1925, с. 222.

<sup>6</sup> Տե՛ս «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում», Եր., 1972, էջ 96-97:

Այս բոլորով հանդերձ, 16-րդ հոդվածը լի էր անորոշություններով: Նախ չէր նշվում, թե որոնք էին հայկական նահանգների սահմանները, չէր որոշվում, թե ով պետք է ճշտեր տեղական կարիքները, բարենորոգումների բնույթն ու ընդգրկումը և թե ինչպես պետք է Ռուսաստանը վերահսկեր թուրքական կողմի համապատասխան ձեռնարկները: Մի բան էր հստակ ու որոշակի. համաձայն պայմանագրի՝ ռուսական բանակը տեղակայվելու էր Արևմտյան Հայաստանում, որը դառնալու էր ռուսական ազդեցության ոլորտ, իսկ հայ բնակչությունը դրվելու էր նրա հովանավորության ներքո: Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածն իր համեստ բովանդակությամբ ցնծությամբ ընդունվեց հայ հասարակական հոսանքների ու առանձին քաղաքական գործիչների կողմից, ովքեր ցանկանում էին իրագործված տեսնել այդ բարեփոխումները: 16-րդ հոդվածը, սակայն, կյանքում չիրագործվեց: Սան-Ստեֆանոյի պայմանագիրը նախնական էր և շահագրգիռ կողմերը ջանք չինայեցին այն վերանայելու:

Սան Ստեֆանոյի պայմանագիրն ուժեղացնում էր Ռուսաստանի դիրքերը Բալկաններում, նեղուցներում և Մերձավոր Արևելքում: Այս հանգամանքը չէր բխում Եվրոպական մեծ տերությունների շահերից, որոնք անհապաղ միջոցներ ձեռնարկեցին՝ Ռուսաստանին զրկելու նվաճումներից: Անգլիայի և Ավստրո-Հունգարիայի անզիջում դիրքորոշումը հնարավոր էր դարձնում անգամ պատերազմի բռնկումը նրանց և Ռուսաստանի միջև: Եվ քանի որ վերջինս պատրաստ չէր պատերազմի, ուստի համաձայնվեց միջազգային կոնգրես հրավիրելու և կնքված հաշտության պայմանագիրը վերանայելու առաջարկներին: Նախատեսված էր նոր կոնգրեսը հրավիրել 1878 թ. ամռան սկզբներին Բեռլինում:

Կ. Պոլսի հայ հասարակական շրջանները որոշեցին մի պատվիրակություն ուղարկել Եվրոպա, որն այնտեղ պաշտոնապես ներկայացնելու էր ««հայ ազգի ցանկություններն ու ձգտումները»»<sup>7</sup>: Պատվիրակության գլուխ կարգվեց ճանաչված հոգևորական Մկրտիչ արքեպ. Խրիմյանը, քարտուղար՝ Մինաս Չերազը, անդամներ՝ Ստեփան Փափազյանը և Խորեն Նար-Պեյը: Ինչպես գրում է Լեոն. ««Եթե կար մի պաշտոն, որ ամենևին չէր գալիս Խրիմյանին, դա հենց դիվանագիտական

---

<sup>7</sup> Տե՛ս Հայոց պատմություն, իսրբ.՝ Հր. Միմոնյան, էջ 350:

առաքելությունն էր>><sup>8</sup>: Ինչնէ, պատվիրակության կազմն արդէն պատրաստ էր, և հենց այդ պատվիրակությունը կոնգրեսին էր ներկայացնելու մի խնդրագիր, որի բովանդակությունը հետևյալն էր.

1. Հայկական գավառները պետք է համախմբվեին մեկ ընդհանուր նահանգի մեջ, որը կառավարվելու էր քրիստոնյա կառավարչի (նախընտրաբար հայ) կողմից՝ հինգ տարի ժամանակով,

2. Նահանգապետը օժտված էր լինելու գործադիր իշխանությամբ և կարող էր պաշտոնանկ արվել միայն տերությունների համաձայնությամբ: Նրա նստավայր էր նախատեսվում Էրզրումը,

3. Նահանգի հարկերից ստացվող եկամտի 20%-ը տրվելու էր ֆինանսների նախարարությանը, իսկ մնացած 80%-ը պետք է հատկացվեր տեղի լուսավորության, առողջապահության, ճանապարհաշինության և տնտեսության զարգացման կարիքներին,

4. Սահմանվելու էր դավանանքի ազատություն, կազմվելու էին քրեական և քաղաքացիական նոր օրենսգրքեր,

5. Վարչական և դատական հիմնարկներում պետք է ապահովվեր քրիստոնյաների և մահմեդականների հավասարաչափ մասնակցության իրավունքը: Ոստիկանների թիվն էլ պետք է հարաբերականորեն համապատասխաներ մահմեդական և հայ բնակչության թվին:

6. Հայերենը, թուրքերենի հետ հավասարաչափ, գործածության մեջ էր դրվելու վարչական ու դատական հիմնարկներում և դառնալու էր պաշտոնական լեզու:

7. Քրդական և չերքեզական հրոսակախմբերը զինաթափվելու էին, իսկ նրանց ասպատակությունների դեմ պայքարելու համար ստեղծվելու էին տեղական ոստիկանական ուժեր՝ եվրոպացի սպայի հրամանատարության ներքո:

8. Նշված բարենորոգումները կյանքում կիրառելու և դրանց վերահսկելու պատասխանատվությունը դրվելու էր միջազգային հանձնախմբի վրա:

Ինչպես ակներև է, հայկական այս ծրագրով չէր դրվում Թուրքիայից Արևմտյան Հայաստանի անջատման և այն անկախ պետություն հռչակելու խնդիրը, չէր առաջարկվում հայկական նահանգները միացնել Ռուսաստանին, այլ դրվում

<sup>8</sup> Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հ. Ա., Փարիզ, 1934, էջ 85:

էր միայն բարենորոգումների խնդիրը, ճիշտ այնպես, ինչպես ժամանակին բալկանյան սլավոնների շրջանում կատարված բարենորոգումները: Ծրագրին կցված տեղեկագիրը պարունակում էր Օսմանյան կայսրության տարածքում բնակվող հայ ազգաբնակչության թվաքանակի վերաբերյալ հավաստի վիճակագրություն<sup>9</sup>, ըստ որի հայերն Արևմտյան Հայաստանում բացարձակ մեծամասնություն էին կազմում, ինչպես բնակչության ընդհանուր թվաքանակով, այնպես էլ ազգային պատկանելիությամբ:

Հետաքրքիր է, որ սուլթանը քաջատեղյակ էր վերոնշված խնդրագրին ու տեղեկագրին և անգամ խրախուսեց պատրիարքին՝ հայկական պատվիրակություն ուղարկելու Բեռլին: Նման դիրքորոշում ուներ նաև Անգլիան: Այս ճանապարհով նրանք փորձում էին սեպ խրել հայերի և ռուսների միջև և ի վերջո ձախողել հայերի պահանջները, իսկ Հայկական հարցն ամփոփել իրենց ցանկալի ձևակերպման մեջ: Եվ պետք է ասել, որ դա նրանց հաջողվեց:

Նախքան վեհաժողովը, հայկական պատվիրակությունն ուղևորվեց Եվրոպա, նրա անդամները եղան Հռոմում, Փարիզում, Լոնդոնում, Ս.Պետերբուրգում՝ հանդիպումներ ունեցան քաղաքական, դիվանագիտական շրջանների հետ, որոնք խոստացան կոնգրեսում պաշտպանել հայերի դատը: Պատվիրակությունն ամբողջ կազմով Բեռլին ժամանեց մայիսի կեսերին և կոնգրեսի մասնակիցներին բաժանեց Արևմտյան Հայաստանի ինքնավարության նախագիծն ու կից փաստաթղթերը: Սակայն, դրանք հենց սկզբից բավարար ուշադրության չարժանացան:

Կոնգրեսի աշխատանքներն սկսվեցին 1878 թ. հունիսի 1-ին և ավարտվեցին ճիշտ մեկ ամիս անց՝ հուլիսի 1-ին: Հայերի բոլոր փորձերը մասնակցելու կոնգրեսին՝ ավարտվեցին անհաջողությամբ և նրանք ստիպված էին բավարարվել մասնակից երկրների պատվիրակների հետ առանձին հանդիպումներով: Բեռլինի կոնգրեսում վերանայվեցին Սան-Ստեֆանոյի պայմանագրի համարյա բոլոր դրույթները, այդ թվում և Հայկական հարցին վերաբերող 16-րդ հոդվածը: Կոնգրեսում տնօրինում էին անգլիական դիվանագետները և հենց նրանց թելադրանքով ընդունվեց 61-րդ հոդվածը, որը ձևակերպվեց հետևյալ կերպ. «Բարձր Դուռը պարտավորվում է առանց հետագա հապաղման իրագործել հայաբնակ մարզերում տեղական

<sup>9</sup> Տե՛ս Լեո, Հայոց հարցի վավերագրերը, Թիֆլիս, 1915, էջ 82:



կարիքներից հարուցված բարելավումներն ու բարենորոգումները և ապահովել հայերի անվտանգությունը չերքեզներից ու քրդերից: Բարձր Դուռը տերություններին պարբերաբար կհաղորդի այն միջոցների մասին, որոնք ինքը ձեռք է առել այդ նպատակի համար, իսկ տերությունները կհետևեն դրանց կիրառմանը»<sup>10</sup>:

Կոնգրեսը որոշեց <<հայաբնակ մարզերում>> բարենորոգումների հարցը չպայմանավորել ռուսական զորքերի առկայությամբ, այլ ընդհակառակը՝ դրանք անցկացվելու էին այնտեղից ռուսական բանակի դուրս գալուց հետո: Փաստորեն, հայկական բարենորոգումների իրագործման իրավական երաշխիքը՝ ռուսական բանակի ներկայությունը, փոխարինվում էր տերությունների՝ բարենորոգումներին վերահսկելու անորոշ երաշխավորությամբ: 60-րդ հոդվածի համաձայն՝ Ռուսաստանը Թուրքիային հետ էր վերադարձնում Ալաշկերտի և Բայազետի գավառների գրավյալ տարածքը (շուրջ 10 հազար քառ. կմ): Հատկանշական է, որ 61-րդ հոդվածում Հայաստան անվանումը չի հիշատակվում, այլ օգտագործվում էր <<հայաբնակ մարզեր>> անորոշ արտահայտությունը: Իսկ թե որոնք էին այդ մարզերը և ինչ բնույթի էին լինելու բարենորոգումները, ոչինչ չէր ասվում:

Այսպիսով, Բեռլինի կոնգրեսում Հայկական հարցը դուրս բերվեց Թուրքիայի և Ռուսաստանի միջպետական հարաբերությունների ոլորտից և դրվեց միջազգային դիվանագիտության բանակցությունների սեղանին: Հանգամանք, որը մի կողմից ավելի անիրական դարձրեց այն լուծելու հեռանկարները, իսկ մյուս կողմից դարձավ միջազգային դիվանագիտության շահարկումների առարկա՝ բազում դժբախտությունների բերելով հայ ժողովրդին: Հայկական հարցի շահարկման արդյունքում է, որ Անգլիան Թուրքիայից կորզեց Կիպրոսը, ինչպես նաև տնտեսական ու առևտրական բազում առանձնաշնորհումներ:

Բեռլինի կոնգրեսից հետո այդ շրջանի հայ քաղաքական գործիչները եկան այն եզրակացության, որ սուլթանական Թուրքիայի լծից Հայաստանը կարող է ազատագրվել ոչ թե եվրոպական տերություններին զանազան «աղերսագրեր» ուղղելու միջոցով, այլ ազատագրական պայքարի շնորհիվ: Հայկական պատվիրակության ղեկավար Մ. Խրիմյանի հանրահայտ արտահայտությունը երկաթե շերտի բացակայության մասին դարձավ հաջորդ սերունդների պայքարի

<sup>10</sup> <<Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում>>, էջ 128:

նշանաբանը: Մ. Խրիմյանը, որը Հայաստանի ինքնավարության հարցում մեծ հույսեր էր կապում արևմտյան խոշոր տերությունների, մասնավորապես՝ Անգլիայի հետ, հանգում է այն համոզմունքին, որ Հայաստանը կարող է ազատագրվել միայն զինված ապստամբության միջոցով. «Կոնգրեսի դռան վրայ գրուած էր՝ իրաւունքը ուժովին է... քաղաքագիտութիւնը գթութիւն չունի, նա ամեն բանի մէջ շահ կփնտրէ... Իրաւունքն էլ սուրի ծայրին է: Հայաստանցիներ, սիրեցէք երկաթը, ձեր փրկութիւնը երկաթով կը լինի, այն պատուական երկաթով, որ Զեյթունի լեռներէն կելնէ... այդ երկաթով ամեն բան կշինվի, խոփ, մանգաղ, սուր, հրացան և այլն»<sup>11</sup>:

Բեռլինի կոնգրեսը ճակատագրական նշանակություն ունեցավ Հայկական հարցի համար: Հայ ազատագրական շարժման գործիչները հուսախաբ լինելով դիվանագիտական ուղիներով այն լուծելու հեռանկարից, որդեգրեցին զինյալ պայքարի մարտավարությունը, որին անդամագրվեցին հայ ազատագրական խմբակներն ու քաղաքական կուսակցությունները:

Հայկական հարցի բովանդակությունը նրա միջազգայնացումից ի վեր կրել է զգալի փոփոխություններ: Կապելով ժամանակակից իրադարձությունների հետ՝ փաստենք, որ 1988 թվականից սկսած՝ Արցախյան շարժման իրադարձությունները նշանավորեցին Հայկական հարցի զարգացման նոր շրջափուլ: Արդի պայմաններում այն ձեռք է բերել նոր բովանդակություն՝ պատմական արդարության վերականգնման, հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման, հայերի՝ իրենց պատմական հայրենիքում համախմբման և Հայաստանի միավորման հիմնադրություններով:

**Բանալի բառեր՝** Հայկական հարց, միջազգայնացում, ռուս-թուրքական պատերազմ, Սան-Ստեֆանո, Բեռլինի վեհաժողով, Մկրտիչ Խրիմյան, Ռուսաստան, Թուրքիա, եվրոպական տերություններ:

---

<sup>11</sup> Մշակ, 1878, N 159:

## **Summary**

The Armenian question is the name of the national liberation movement fought by the Armenian people for liberating the Western Armenia from the Ottoman Empire. The issue appeared in the focus of international diplomacy after the Russian-Turkish war in 1877-1878. The Armenian question was discussed in San Stefano Treaty signed on 19 February 1878 where the 16th article referred to the Armenia and Armenians. The reforms provided with the Berlin's 61st article that were the provision of the security of the Armenian population, the report on the progress of reforms to the European powers by the Sublime Porte, were eventually not realized, then subjecting Armenians to new trials.

## Գրականության ցանկ

1. Գաբրիլյան Խ., Հայկական հարցը, Պեյրուժ, 1962:
2. Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հ. Ա., Փարիզ, 1934:
3. Լեո, Հայոց հարցի վավերագրերը, Թիֆլիս, 1915:
4. Հայ ժողովրդի պատմություն, ՀԽՍՀ ԳԱԱ, հ. 6, Եր., 1981:
5. Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, Եր., 1972:
6. Հայոց պատմություն, իսմբ.՝ Հր. Միմոնյան, Եր., 2012:
7. Մշակ, 1878, N 159:
8. Մարուխան. Հայկական խնդիրն և Ազգային սահմանադրությունը Թուրքիայում (1860-1910), հ. Ա, Թիֆլիս, 1912:
9. Ю. Ключников, А. Сабанин, Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях, ч. 1, М., 1925: